



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 852-Ա/Ք

« 01 » 10 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԽՈՍ-ՈՒՍԱՆՈՂ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԹՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 3-Ի ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի հոկտեմբերի 25-ի N 504 որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող բարձրագույն ուսումնական հաստատություններում դասախոս-ուսանող հարաբերակցության հաշվարկային թվերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարի 1995 թվականի հունվարի 3-ի « Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում դասախոս-ուսանողներ հարաբերակցության հաշվարկային թվի հաստատելու մասին» հրամանը:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԽՈՍ-ՈՒՍԱՆՈՂ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԹՎԵՐԸ

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը		Դասախոս/ուսանող հարաբերակցություն	
1	Երևանի պետական համալսարան հիմնադրամ	1/ 5.3,	մասնաճյուղում՝ 1/ 7.5
2	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ	1/ 5.3,	մասնաճյուղում՝ 1/ 7.5
3	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ՊՈԱԿ	1/ 8	
4	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամ	1/ 7,	ճարտարապետության ֆակուլտետում՝ 1/ 3.5
5	Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան ՊՈԱԿ	1/ 7.5,	մակոյթի մասնագիտություններում՝ 1/ 3.5
6	Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարան ՊՈԱԿ	1/ 7	
7	Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա ՊՈԱԿ	1/ 1.5	
8	Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա ՊՈԱԿ	1/ 1.5	
9	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ ՊՈԱԿ	1/ 1.5	
10	Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամ	1/ 6	
11	Երևանի Մխ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան հիմնադրամ	1/ 6	
12	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ ՊՈԱԿ	1/ 6	
13	Ռուս-հայկական /սլավոնական/ համալսարան ՊՈԻՀ	1/ 6	
14	Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ ՊՈԱԿ	1/ 7.5	
15	Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարան ՊՈԱԿ	1/ 7.5	
16	Գավառի պետական համալսարան ՊՈԱԿ	1/ 6	
17	Գորիսի պետական համալսարան ՊՈԱԿ	1/ 7.5	